ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Mega Brand LLC-ն ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-25/04 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
1	Դարակաշարեր՝ նախատեսված փաստաթղթերի տեղադրման համար՝ համաձայն պայմանագրին կից ներկայացված նկարների: Դարակաշարերը պետք է պատրաստված լինեն երկաթյա կոնստրուկցիաներով, դարակները համապատասխան խտացրած 18 մմ հաստությամբ լամինացված փայտանյութից /ԴՍՊ/: Դարակաշարերը հավաքվում են տեղում հեղյուս մանեկային ամրացումներով: Դարակաշարի չափսերը. բարձրություն՝ 270 սմ (շեղում՝ +-2 %), լայնություն՝ 150 սմ (շեղում՝ +-2 %), խորություն՝ 32-35 սմ: Դարակների քանակը պետք է լինի 6 հատ՝ 40 սմ մեկ հաջորդականությամբ, կարգավորվող (7 սմ բարձրացնել իջեցնելու հնարավորությամբ): Ստորին դարակը սկսվում է գետնից 15 սմ բարձրությունից: ՈՒղղահայաց մետաղական դետալները պետք է պատրաստվեն առնվազն 25x25 մմ չափի պողպատյա քառանկյուն խողովակներով, որոնց պատերի հաստությունը ոչ պակաս 3 մմ: Դարակաշարի ուղղահայաց դետալները պետք է ունենան առնվազն 50x50 մմ չափսերով ոչ պակաս 3 մմ հաստությամբ տակդիրներ (закладной): Հորիզոնական մետաղական դետալները պետք է պատրաստվեն առնվազն 25x25 մմ չափի պողպատյա անկյունակներով, որոնց պատերի հաստությունը ոչ պակաս 2,5 մմ, չորս անկյուններին ուղղահայաց եռակցված անկյունակներ 10 սմ երկարությամբ և 2 անցքով: Հորիզոնական դետալները ամրացնելու համար ուղղահայաց դետալները մի կողմում պետք է ունենան քառանկյուն անցքեր ողջ երկայնքով, մյուս հանդիպակաց կողմում կլոր անցքեր: Դարակաշարերը պետք է ունենան անցքեր պատին ամրացնելու համար՝ համապատասխան դետալներով: Դարակաշարի նմուշը նախապես համաձայնեցվում է Գնորդի հետ: Դարակաշարերը պետք է լինեն չօգտագործված: Դարակաշարերը մատակարարվում են Գնորդի

	կողմից բանավոր կամ թղթային կամ էլեկտրոնային փոստի միջոցով Վաճառողին տրամադրվող պատվերի հիման վրա՝ պատվերը ստանալու օրվան հաջորդող օրվանից հաշված 30 օրացուցային օրվա ընթացքում՝ պատվերում նշված քանակով (քանակներով) և հասցեում (հասցեներում)։ Յուրաքանչյուր պատվերի ամբողջական կատարումը ներառում է դարակաշարերի տեղափոխումը, բեռնաթափումը, հավաքումը և տեղադրումը (ներառյալ անհրաժեշտ բոլոր դետալները և նյութերը), որոնք իրականացնում է Վաճառողը՝ իր միջոցների հաշվին։ Դարակաշարերի համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Դատական դեպարտամենտի կողմից ապրանքներն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 1 տարի։

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

Mega Brand LLC в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-25/04 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
1	